

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
 Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,
 Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
 Մըղկըտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ,
 5 Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
 Եվ գյուղերից, և՛ շեներից՝ տըխո՛ւր, դատարկ ու

խավար,

Զարկված հայրենիք,

Զըրկված հայրենիք:

Խըռնըվում են մըտքիս հանդեպ բանակաները անհամար,
 10 Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
 Ու ջարդարար ոհմակաները աղաղակով վայրենի,
 Ավարներով, ավերներով, խընչույքներով արյունի,
 Որ դարձըրին քեզ մըշտական սև ու սուգի մի հովիտ,
 Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ,
 15 Ողբի՛ հայրենիք,
 Որբի՛ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու

կենդանի,

Կանգնած խոհո՛ւն, խորհըրդավոր ճամփին նորի ու

հընի.

Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում Աստծու

հետ

